

ՁԱՅՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

ՔԱՐՈԶ
ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1956 թ.)

Աստուծո խոսքը մարդոց ուղղյալ թե Հին և թե Նոր Ուխտով, տևական ու վսեմ կոչ մըն է սիրո և խաղաղության: Պետք է ըլլանք «որդիք խաղաղութեան» (Ղուկ. Ժ 6), որպեսզի արժանի դառնանք «որդիք Աստուծոյ» կոչվելու:

Արդյոք պիտի բացվի՞ վերջապես տևական խաղաղության արշալույսը: Արդյոք, թևերը ապատորեն տարածած, պիտի կարենա՞ աներկյուղ սավառնիլ խաղաղության սպիտակ աղավնին: Արդյոք ժողովուրդները և անոնց առաջնորդները պիտի փութա՞ն «պահել կմիաբանութիւն Հոգւոյն յօղիւ խաղաղութեան» (Եփես. Դ 3):

ՃԱՌ
ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
(1959 թ.)

Մենք հավատում ենք, որ Արևմուտքը և Արևելքը կարող են խաղաղ ու արդար կերպով լուծել բոլոր տեսակի վիճելի հարցերը և ուրախ ենք, որ մեծ պետությունների ներկայացուցիչները այս պահուս կողք-կողքի նստած մտածում են և ծրագրում գտնել խաղաղության ուղին: Պետք է միշտ լավատեսորեն հուսալ, որ նման բանակցություններ ուշ կամ կանուխ իրենց բարի և շինարար պտուղները կտան:

Մենք ի սրտե մաղթում ենք մանավանդ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները և մեր Սովետական Հայրենիքը, առաջնորդված երկուսն էլ համամարդկային վեհ իդեալներով, իրենց միացյալ ճիգերի շնորհիվ, կարողանան ի վերջո դառնալ այն երկու ամուր սյուները, որոնց վրա ապահով պիտի հենվի մեր աշխարհի խաղաղության հաղթական կամարը՝ ի փառս Աստուծո և ի փառս մարդու:

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(22 ապրիլ 1973 թ.)

Հակառակ վիատեցուցիչ մի շարք ժխտական դրսևորումների, մենք մնում ենք հաստատ այն հավատքի վրա՝ թե մարդկությունը անհրաժեշտորեն գնում է դեպի նվաճումը՝ միջազգային կյանքի խաղաղ գոյակցության և բարեկամական գործակցության: Ոչ միայն հոգով վատառողջ, այլև մտքով տկար պետք է լինել՝ չտեսնելու համար թե արդի աշխարհի գիտության և արդյունաբերության, ընկերային հարաբերությանց և հաղորդակցությանց միջոցների հսկայաքայլ կարգացումները մի կողմից, տնտեսական և քաղաքական շահերով ժողովուրդների փոխադարձ ենթակայությունը մյուս կողմից, տակավ փոփոխում են և պետք է փոփոխեն մի շարք ազգային և միջազգային հին հասկացություններ: Ընկերային-տնտեսական հեղաշրջումների, գիտությանց և տեխնիկայի նվաճումների և աշխարհը կործանելու կարող զենքերի սպառնալիքների հեռանկարների առջև, ժողովուրդները պետք է հստակ տեսնեն թե բոլորը անխտիր անբաժան մի միասնություն են կազմում, մի ճակատագրով, մի ապագայով, փրկության մի ուղիով: Այդ ուղին, խաղաղ գոյակցության և համատեղ գործակցության ուղին է:

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1975 թ.)

Աշխարհի բոլոր ժողովուրդների, հաղթող թե պարտվող ժողովուրդների, անցյալի դառն փորձությունները, պետությունների փոխադարձ շահերի իրապաշտ ըմբռնումը, ժողովրդական լայն զանգվածների գիտակցության մեջ հետզհետե բյուրեղացող համամարդկային հառաջդիմական գաղափարները, գիտության և տեխնիկայի աներևակայելի նվաճումները, մենք նկատում ենք իրական ու զորավոր նախադրյալներ, ի խնդիր ազգամիջյան թշնամությանց տակավ վերացման և համաշխարհային խաղաղ գոյակցության ամրապնդման:

Հակառակ հակասական դրսևորումների, այո, մարդկությունը գնում է դեպի հավաքական գործակցություն, դեպի համերաշխություն, դեպի խաղաղություն, դեպի մարդկայնացում:

Այն օրից մանավանդ, երբ երկրագնդի առաջին մարդը տիեզերք բարձրացավ, երկիրը դարձավ առավել միասնական մի աշխարհ, ամեն ազգի մարդիկ դարձան բնակիչները մի երկրի, բոլոր ժողովուրդները՝ անդամները մի մարդկային ընտանիքի, վեր ամեն տեսակի՝ բնական, ընկերային կամ քաղաքական տարբերություններից:

ԽՈՍՔ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ
(6 հունիս 1977 թ.)

Մարդկությունը իր ձեռքին մեջ ունի այժմ նյութական ուժի հզորագույնը՝ ատոմական էներգիան: Այն կարելի է օգտագործել թե կյանքի խաղաղ կարգացման և թե պատերազմական նպատակներով: Արդ, մեր օրերի ամե-

նահրամայական հարցն է՝ ձեռք բերել մարդկային այն բարոյական ուժը, որով կարելի լինի նյութի սանձակերծած էներգիան ծառայեցնել մարդկության բարօրության ու երջանկության, ի խնդիր հացի և լույսի:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք լինել և վիճել. խաղաղության հրամայականը սակայն վեր պետք է լինի ամեն վեճից և դառնա բոլորի համար մտածելու ու գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու:

Երկյուղի և անստուգության մեջ տառապող այսօրվա մարդկությանը պարտինք, մանավանդ մենք հոգևորականներս, ցույց տալ խաղաղության և ամբողջական կինաթափման ճանապարհը:

Անկախ քաղաքական-ընկերային վարչակարգերից և վեր այդ բոլորից, մարդիկ այսօր պահանջում են՝ խաղաղ ապրելու իրավունք, աշխատանքի իրավունք, հավասարության իրավունք, ազգային ազատ ինքնորոշման իրավունք: Առանց այս հիմնական իրավունքների կենսագործման, հիմնապես վտանգված կլինեն նաև մարդկային ազատությունները: Ահա, Մեր կարծիքով, Հելսինկիի պատմական փաստաթղթի գերագույն իմաստն ու նպատակը:

ԽՈՍՔ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(14 մայիս 1978 թ.)

Այս պահին շատ երջանիկ ենք, որ այս սուրբ բեմից միաժամանակ հընչում են ձեր ականջներին, քաղցրորեն հնչում են հայերեն և վրացերեն լեզուները: Մեր ազգային լեզուների մեջ կա պատկերը մեր հոգիների: Մենք երկու ժողովուրդներս եղել ենք միշտ միատեղ, ձեռք-ձեռքի տված, կողք-կողքի և ուրախության, և փառքի շրջաններին, և դժվարությունների, և մանավանդ բարբարոս արշավանքների օրերին: Մեր երկու ժողովուրդները շատ հաճախ պատմության ընթացքին միատեղ են պայքարել նույն թշնամիների դեմ, պաշտպանելու համար իրենց լույս հավատքը քրիստոնեական, պաշտպանելու համար իրենց հայրենի հողը և իրենց ժողովուրդների ազատությունը:

ՔԱՐՈԶ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

1943 թվականին, ուղիղ 35 տարիներ առաջ, Բուխարեստում մի նոր ձեռնադրված երիտասարդ վարդապետ, Վազգեն անունով, իր անդրանիկ պատարագն էր մատուցում Բուխարեստի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում, խուռներամ հավատացյալ ժողովրդի ներկայությամբ: Նա իր քարոզն սկսեց նույն այս բնաբանով. «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Հիշեցեք մի պահ՝ 1943 թվականը, պատերազմի ամենաահավոր տարիներից մեկը, հայրենական պատերազմի, համաշխարհային երկրորդ պատերազմի օրերը, երբ մարդկային արյունը հեղեղի նման հոսում էր բոլոր ճակատների վրա: Միայն սովետական ժողովուրդները, ինչպես գիտեք, քսան միլիոն զոհ տվեցին, այդ թվում նաև ավելի քան երկու հարյուր հազար հայ ժողովրդի զավակներ: Տակավին պատերազմի վախճանը հայտնի չէր, և չգիտեինք, թե արդյոք այդ ահավոր գոյամարտը վերջանալո՞ւ է արդարության հաղթանակով: Այդ դժվարին պայմանների մեջ էին նաև հայերը Ռումինիա-

յում, երբ Ռումինիան ինքը գտնվում էր թշնամի ճակատի վրա, ֆաշիստական Գերմանիայի տիրապետության ներքո:

Ահա այդ օրերին էր, որ Մենք, այն ժամանակ երիտասարդ վարդապետ, Աստուծո և ժողովրդի առաջ ուխտեցինք ծառայել մեր Եկեղեցուն և ժողովրդին՝ բնաբան ընտրելով՝ «Տէր, եթէ կշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ կօրհնութիւնս քո»: Ինչքան հիշում ենք, Մեր քարոզը կարգացրինք աղոթքների շարքով: Ուխտ էինք անում աղոթել մեր Եկեղեցու անսասանության և ծաղկումի համար, մեր ժողովրդի համար, մեր հայրենիքի համար: Այդ օրերին անջուշտ աղոթեցինք նաև աշխարհի խաղաղության համար, որպեսզի վերջ գտներ արյունահեղ ահռելի պատերազմը: Օրն էր նոյեմբերի 28-ը, այսինքն նախօրյակը Սովետական Հայաստանի պետական տոնի: Այդ օրերին Մենք ի վիճակի չէինք հիշատակելու նոյեմբերի 29-ը, ոչ էլ Սովետական Հայաստանի անունը, հասկանալի պատճառներով: Գտնվում էինք գերմանական գրավման տակ: Սակայն, այնուամենայնիվ, հոգեկան համարձակությունը ունեցանք աղոթելու կոհված հայ զինվորների հոգիների համար: Մեր աղոթքն էր նաև, որ Աստված օգնության հասնի թե հայ ժողովրդին, թե բոլոր ազատասեր ժողովուրդներին, որոնք միացյալ ճակատ կազմած այն ատեն՝ Սովետական Միությունը, Ֆրանսիան, Անգլիան, Ամերիկան և այլ պետություններ, մարտնչում էին հանուն ազատության և արդարության:

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1982 թ.)

Ցեղասպանություն տեսած հայ ժողովուրդը, առավել վճռականությամբ, իր ձայնը, իր աղերսը միացնում է խաղաղության ուժերին, որովհետև պայծառ գիտակցությունը ունի, թե միայն աշխարհի խաղաղության պահպանման պայմաններում նա պիտի կարողանա գոյատևել իբրև ազգություն, իբրև հայրենի պետություն և իբրև Եկեղեցի: Հայոց վերածնված մայր երկրի ժողովրդի բախտն ու ճակատագիրը պայմանավորված են խաղաղության պահպանմամբ, խաղաղության ուժերի հաղթանակով: Որևէ հայ մարդու համար, այլ կերպ մտածում կամ գործունեություն կարելի չէ ըմբռնել:

ԽՈՍՔ
ՈՒՂՂՎԱԾ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈԿՏ. ՌՈԲԵՐԹ ՌԱՆՍԻՆ
(Լոնդոն, 6 մայիս 1983 թ.)

Ես մտածում եմ, որ միջեկեղեցական փոխադարձ սիրո, միատեղ աղոթելու և միատեղ գործելու այս ոգին, ճշմարիտ էկումենիկ ոգին, հրամայական պահանջ է մանավանդ մեր օրերին, երբ աշխարհը ալեկոծ է բաղում անարդարություններով, բաղում նախապաշարումներով, բաղում վատառողջ կրքերով ու անսանձ թշնամություններով, երբ մարդիկ ու ազգությունները լույսի և խաղաղության մի ճանապարհ են որոնում գրեթե հուսահատ: Թվում է, թե մարդկությունը հասել է մի հանգրվանի, երբ իր բանականության ուժերը այլևս անզոր են դարձնում ինքն իրեն ղեկավարելու: Այսպիսի իրադրության մեջ, մեր օրերին, կարծում եմ առավել հրամայական է դառնում, որ Եկեղեցիների պատասխանատու սպասավորները միատեղ աղոթեն ու գործեն Քրիս-

տոսի Ավետարանը իրենց ձեռքում՝ որոնելու համար փրկության մի ճանապարհ:

Ես չգիտեմ՝ կհաջողվի՞ այդ մեկ՝ Եկեղեցիներիս, մեկ՝ քրիստոնյաներիս: Պիտի կարողանա՞նք քանդել միջնորմը թշնամությունների, պիտի կարողանա՞նք համոզել ժողովուրդներին և պետական ղեկավարներին, որ բոլոր մարդիկ միևնույն Աստուծո որդիներն են, որ եղբայրներ են միևնույն տան մեջ բնակվող, միևնույն առօրյա դժվարություններով, միևնույն երազանքներով, միևնույն ճակատագրով:

Արդյոք մեր օրերի մարդկանց պիտի կարողանա՞նք լսելի դարձնել Աստուծո սաստը, թե՝ «Ո՞ւր է Աբել, եղբայր քո»:

ՔԱՐՈԶ
ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(29 մայիս 1983 թ.)

Ես կհիշեմ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ֆրանսուա Պոնսեի հիշողությունները վերջին պատերազմին նախորդող դեպքերու առնչությամբ: Այդ օրերուն, երբ Եվրոպայի բոլոր ազգերը կզգային, թե պիտի սանձազերծվի Գերմանիոյ ահավոր պատերազմական մեքենան, Ֆրանսուա Պոնսեն վերջին փորձ մը կուզե կատարել և այցելության կերթա Բերհսդեսգաադեն, դրախտային խաղաղ բնության ծոցին մեջ երկնամերձ լեռներով ու խիտ անտառներով շրջապատված այն հանգստավայրը, ուր կբնակեր այն օրերուն Գերմանիոյ դաժան դիկտատորը: Ֆրանսացի նախարարը կփորձե անգամ մը ևս քրիստոնեաբար, մարդասիրաբար կոչ ուղղել անոր խղճին, որ պահպանե իր հոգիի խաղաղությունը և խնայե մարդկության՝ ներշնչվելով այդ դրախտային խաղաղ բնութենեն, որուն մեջ կապրեր: Գերմանիոյ պատերազմամոլ ղեկավարի հոգիին մեջ սակայն տեղ չկար խաղաղության:

Մեկ շաբաթ հետո անոր ռազմական մեքենան սկսավ շարժիլ, և սանձազերծվեցավ ահավոր երկրորդ պատերազմը համաշխարհային, որուն զոհ գացին շուրջ հիսուն միլիոն մարդիկ, անոնց մեջ նաև ավելի քան երկու հարյուր հազար կավակները մեր հայրենիքի:

Մեր օրերուն ալ մարդիկ և ազգություններ խաղաղություն կփնտրեն:

ՔԱՐՈԶ
ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվար 1984 թ.)

Հիսուս եկավ փարատելու ունայնությանց մշուշը, քանդելու տիրապետող հզորների աթոռը և բարձրացնելու խոնարհներին, բարիքներով հագեցնելու քաղցյալներին, անիրավվածներին:

Հիսուս բերեց աշխարհին իր հոգու խաղաղությունը և խաղաղությամբ սերմանեց արդարության սերմերը: Հիշենք Հակոբոս առաքյալի մսրգարեական խոսքերը, թե՝ «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի՝ այնոցիկ որ առնեն զխաղաղութիւն» (Յակոբ. առաքելոյ Գ 18):

Մանավանդ ատոմական մեր դարաշրջանում հրամայականորեն այժմեական է՝ արդարությունը խաղաղությամբ սերմանելու այս պատգամը.

Այլևս չի կարելի խոսել մարդասիրության ու արդարության մասին առանց ապահովելու նախ խաղաղ գոյակցությունը աշխարհի պետությունների:

Աստուծո և նրա Որդու՝ Հիսուսի սերը դեպի մարդիկ, հիմնականում և առաջին հերթին արտահայտվում է խաղաղարար տնօրինությամբ:

Ավետարանի բոլոր մեծ պատգամների կիսակետը սիրո և խաղաղության գաղափարներն են:

Մեր օրերին աշխարհի խաղաղությունը պահպանելու և ընդհանուր կամ գեթ մասնակի վինաթափման հրամայականը՝ ամենաքրիստոնեական, ամենաբարոյական գաղափարն է: Այսօր ու ապագայում, եթե մարդկությունը իր գոյատևումը ապահովելու համար կարիք ունի մի գաղափարախոսության, դա անպատերազմ խաղաղ գոյակցության գաղափարախոսության հաստատումն է մարդկային աշխարհում: